

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել, մանրամասների համար դիմել՝
ameriabank.am | 010 561111

Տեղեկատվական ամփոփագիր Օվերդրաֆտ՝ վճարային քարտերով ապահովությամբ

Վճարային քարտերով տրամադրվող օվերդրաֆտը հնարավորություն է տալիս առանց քարտային հաշվին նախապես գումար մուտքագրելու օգտագործել այն բանկի կողմից քարտով տրամադրված վերականգնվող վարկային գծի շրջանակներում: Քարտով տրամադրված վերականգնվող վարկային գծի առավելագույն մեծությունը Ձեր վարկային սահմանաչափն է:

Օվերդրաֆտը տրամադրվում է դեբետային քարտով և առանց արտոնյալ ժամանակահատվածի: Այն նախատեսված է և՛ կանխիկ, և՛ անկանխիկ գործարքների համար, ունի կանխիկացման ցածր սակագին թե՛ Ամերիաբանկի բանկոմատներում, և թե՛ այլ բանկոմատներում (նաև արտերկրում):

ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օվերդրաֆտի մարման եղանակը

Օվերդրաֆտի տոկոսագումարները մարվում են առնվազն ամիսը մեկ անգամ, իսկ օգտագործված մասը ենթակա է մարման վերջնաժամկետին:

Վարկի գումարի տրամադրման եղանակը

Գումարը տրամադրվում է քարտով՝ անկանխիկ եղանակով:

Վարկի հասանելիությունը սահմանափակող պայմաններ սահմանված չեն:

Վարկավորման համար վարկառուի կողմից պարտադիր վճարման ենթակա վճարներ չեն սահմանվում:

Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացումը.

Բանկը վարկի նախնական հաստատման մասին որոշումը կայացնում է վարկի հայտը ստանալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Հաստատելու վերաբերյալ որոշումը կայացնում է հաճախորդի կողմից պահանջվող փաստաթղթերի ամբողջ փաթեթը Բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 8 (ութ) աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը որոշման մասին հաճախորդին տեղեկացնում է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: Վարկը վարկառուին տրամադրվում է պայմանագրով նախատեսված ապահովման պայմանագրերի կնքված լինելու դեպքում:

Վարկը վարկառուին տրամադրվում է գրավի պայմանագրերի՝ Բանկի համար ընդունելի ձևով ձևակերպելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելուց, գրավի առարկաները Բանկի պահանջով վերջինիս հետ համագործակցող ապահովագրական ընկերության միջոցով

ապահովագրելուց, ինչպես նաև վարկի տրամադրման այլ պայմանները վարկառուի կողմից կատարվելուց 1 (մեկ) աշխատանքային օր հետո:

Բանկի կողմից վարկի վերաբերյալ որոշման կայացումից հետո, եթե հաճախորդը.

- հայտնում է վարկ ստանալու մասին իր դրական որոշման վերաբերյալ վարկի հաստատման մասին տեղեկանալու օրվանից 45 (քառասունհինգ) օրացուցային օրվա ընթացքում, ապա սկսվում է վարկի ձևակերպման և տրամադրման փուլը:
- հայտնում է վարկի հաստատման մասին տեղեկանալու օրվանից 45 (քառասունհինգ) օրացուցային օրը լրանալուց հետո, վարկի վերաբերյալ Բանկի որոշումը ենթակա է վերահաստատման:

Հաճախորդի վարկի տրամադրման համար դրական գործոններ կարող են հանդիսանալ՝

- Բանկի և հաճախորդի միջև ձևավորված հարաբերությունների պատմությունը
- Գործարար համբավը
- Բանկի համակարգով հաճախորդի միջոցների շրջանառության ծավալները
- Բանկային հաշվի միջին մնացորդների մեծությունը և այլն

Վարկային գծերի մերժման գործոնները՝

- Վարկառուի կողմից ներկայացված տվյալները /փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը/ անարժանահավատ են կամ ոչ ամբողջական:
- Վարկառուի եկամուտներն անբավարար են պարտավորությունների մարման համար
- Վարկառուն ունի վատ վարկային պատմություն, ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ /այդ թվում՝ երրորդ անձանց հանդեպ/:

Վարկ/գրավի հարաբերակցություն

Բանկի որոշմամբ կարող է տրամադրվել քարտով վարկային գիծ՝ հետևյալ պայմաններով (դեբետային կամ կրեդիտային քարտով)

Արժույթ	Տոկոսադրույք	Վարկային գիծ/Ավանդ
Ավանդի արժույթով	Ավանդի տոկոսադրույք +4%	Մինչև 90%
Ավանդի արժույթից տարբերվող արժույթով	քարտով վարկային գծերի սակագներով սահմանված տոկոսադրույքով	Մինչև 70%

[1] Օվերդրաֆթ/ավանդ հարաբերակցության մեջ ավանդի գումարը ներառվում է ժամկետի սկզբում վճարված տոկոսագումարը նվազեցնելուց հետո:

Վարկային քարտով պարտավորությունները ժամանակին չմարելու դեպքում, բանկն իրավունք ունի անակցեպտ գանձել պարտավորության գումարը ավանդի գումարից:

Կանխավճարի մեծություն

Տվյալ վարկատեսակի համար սահմանված չէ կանխավճարի մեծություն:

Արտարժույթով տրամադրվող վարկային գծերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

Ուշադրություն՝ վարկային քարտի նվազագույն մարման գումարը չվճարելու դեպքում բանկը գանձում է վճար՝ 5,000 ՀՀ դրամի չափով: 2015թ. հունվարից հետո կնքված վարկային քարտերի համար միանվագ գումարի փոխարեն գործում են «Ֆիզիկական անձանց վարկավորման պայմաններով» նախատեսված ժամկետանց մայր գումարի եւ տոկոսի նկատմամբ գործող տույժերն եւ տուգանքները:

Ուշադրություն՝ վարկի ժամկետից շուտ մարման սահմանափակումներ չկան:

Վարկի տեսակը	Գույքով ապահովված օվերդրաֆտ դեբետային քարտով		
Վարկառուի նկարագրություն	ՀՀ քաղաքացիություն ունեցող և չունեցող ՀՀ ռեզիդենտ 18-65 տարեկան ֆիզիկական անձինք		
Վարկի նպատակը	Վճարումների իրականացում		
Արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
Վարկի տրամադրման եղանակ	Գումարը տրամադրվում է քարտով՝ անկանխիկ եղանակով		
Ընդհանուր անգրավ պարտավորությունների առավելագույն գումար (ներառյալ այլ բանկերում և վարկային կազմակերպություններում)	Եկամուտի 8 ապատիկը, սակայն Փաստաթղթավորված եկամուտը Ամերիաբանկի միջոցով կամ եկամուտը Նորք տեղեկատվա վերլուծական կենտրոնում գրանցված լինելու դեպքում՝ առավելագույնը 10 մլն ՀՀ դրամ Փաստաթղթավորված եկամուտը Ամերիաբանկի միջոցով չստանալու դեպքում՝ առավելագույնը 6 մլն ՀՀ դրամ Բանկում 6 ամսվա ընթացքում բանկային հաշիվներին միջին մնացորդի արևադարձային ռեառում արավեսագումար՝ 6 մլն ՀՀ դրամ		
Վարկի ժամկետ	Անժամկետ ցպահանջ* *Մինչև Բանկի կողմից վարկի հետկանչումը, որն իրականացվում է Պայմանանագրով սահմանված կարգով և պայմաններով Բանկի կողմից պարբերաբար իրականացվող մոնիթորինգի արդյունքների հիման վրա:		

Վարկավորման սահմանաչափ**

Փաստաթղթավորված եկամուտը Ամերիաբանկի միջոցով ստանալու կամ եկամուտը Նորք տեղեկատվա վերլուծական կենտրոնում գրանցված լինելու դեպքում առավելագույնը 10 մլն ՀՀ դրամ՝
 Առավելագույնը եկամտի 4-ապատիկ
 Փաստաթղթավորված եկամուտը Ամերիաբանկի միջոցով չստանալու դեպքում առավելագույնը 3 մլն ՀՀ դրամ՝
 Առավելագույնը փաստաթղթավորված եկամտի 3 -ապատիկ՝ երաշխավորություն չի պահանջվում,

Բանկում 6 ամսվա ընթացքում բանկային հաշիվներին միջին մնացորդի առկայության դեպքում՝ 6 ամսվա միջին և վերջին ամսվա միջինի նվազագույնը,
 մինչև 3 մլն ՀՀ դրամ
 Առավելագույնը մնացորդի 3 ապատիկ

Հաշիվների միջին մնացորդի պետք է լինի նվազագույնը 100,000 ՀՀ դրամ և կիրառելի է նվազագույնը 3 ամսվա հաշվետեր հաճախորդների դեպքում, ավանդի առկայության դեպքում բացառելով ավանդի գումարի կրկնակի հաշվառումը

Քարտատեսակ	Տարեկան տոկոսադրույք	Քարտի նվազագույն և առավելագույն վարկային սահմանաչափ	Քարտի տարեկան սպասարկման վճար	Քարտային փաթեթի սպասարկման վճար	Քարտի վարկային սահմանաչափի ավելացում
Arca Classic, Այն Visa Classic Cirrus Maestro Visa Electron	17.5% 14.5% 12.5%	1,000,000 ՀՀ դրամ 3,000 ԱՄՆ դոլար 3,000 Եվրո	5,000 ՀՀ դրամ տարեկան, Բնտերնետ/Մոբայլ Բանկինգ համակարգով պատվիրելու դեպքում՝ 2,500 ՀՀ դրամ	-	1,500 ՀՀ դրամ
MasterCard Standard/ VISA Classic	17.5% 14.5% 12.5%	100,000-1,500,000 ՀՀ Դրամ 3000-5,000 ԱՄՆ դոլար 3000-5,000 Եվրո	5,000 ՀՀ դրամ տարեկան, Բնտերնետ/Մոբայլ Բանկինգ համակարգով պատվիրելու դեպքում՝ 2,500 ՀՀ դրամ	-	3,000 ՀՀ դրամ

Master Card Gold/ VISA Gold/	16.5%	1,500,000-7,500,000 դրամ	2,000 ՀՀ դրամ ամսական/ 20,000 ՀՀ դրամ տարեկան,	3,000 ՀՀ դրամ ամսական/ 30,000 ՀՀ դրամ տարեկան	5,000 ՀՀ դրամ
	13.5%	5,000-15,000 ԱՄՆ դոլար	Բնտերնետ/Մոբայլ Բանկինգ		
	11.5%	5,000-15,000 Եվրո	համակարգով պատվիրելու դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ տարեկան		
Master Card Platinum/VISA Platinum	16.5%	5,000,000- 50,000,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ ամսական/ 30,000 ՀՀ դրամ տարեկան,	3,000 ՀՀ դրամ ամսական/ 30,000 ՀՀ դրամ տարեկան	5,000 ՀՀ դրամ
	13.5%	15,000-100,000 ԱՄՆ դոլար	Բնտերնետ/Մոբայլ Բանկինգ		
	11.5%	15,000-100,000 Եվրո	համակարգով պատվիրելու դեպքում՝ 20,000 ՀՀ դրամ տարեկան		
Փաստացի տոկոսադրույք		ՀՀ Դրամ	17.87-23.89%		
		ԱՄՆ դոլար	14.43-18.15%		
		Եվրո	12.19-15.35%		
Մարումների հաճախականությունը	Ամսական				
Վճարման արտոնյալ ժամկետ	Մինչև 51 օր				
Տոկոսների հաշվարկում	Մեկ ամսվա ընթացքում գծի սահմաններում օգտագործված գումարները վճարման արտոնյալ ժամկետում ամբողջությամբ մարելու դեպքում օգտագործված գումարների վրա տոկոս չի հաշվարկվում Չմարելու դեպքում օգտագործված գումարների վրա օգտագործման առաջին իսկ օրվանից հաշվարկվում է տոկոս, որը հաշվարկվում է նաև հետագայում Օգտագործվող/ված գումարների նկատմամբ, որը ենթակա է մարման ամսական պարբերականությամբ:				

Գրավադրվող գույքի նկարագրություն	Գրավի առարկա կարող է հանդիսանալ Բանկի համար ընդունելի անշարժ գույք, տրանսպորտային միջոց, հիմնական միջոց, ոսկով մետաղական հաշիվներ, դրամական միջոցներ, Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր:
---	---

<p>Վարկ/գրավ հարաբերակցության առավելագույն սահմանաչափի (անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի և հիմնական միջոցի դեպքում որպես արժեք հիմք է ընդունվում լիկվիդային արժեքը)</p>	<p>Վարկի ապահովություն հանդիսացող գրավի առարկաների արժեքը ներառվում է վարկ/գրավ հարաբերակցության հաշվարկում հետևյալ առավելագույն սահմանաչափերով ըստ յուրաքանչյուր գրավատեսակի.</p> <ol style="list-style-type: none"> 1. անշարժ գույք. Երևանում գտնվող գույքի համար՝ 70%, Երևանից դուրս գտնվող գույքի համար՝ 60% 2. տրանսպորտային միջոց՝ 60% 3. հիմնական միջոց՝ 40%, բայց ոչ ավելի քան ընդհանուր գրավի մեջ 30%-ը 4. ոսկու առարկայազուրկ մետաղական հաշիվ Ամերիաբանկում՝ 80% 5. դրամական միջոց Ամերիաբանկում/ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր, որից.
<p>Գույքի գնահատում</p>	<p>Գրավադրվող գույքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից</p>
<p>Գույքի ապահովագրություն</p>	<p>Գրավադրվող անշարժ գույքի, տրանսպորտային և հիմնական միջոցների ապահովագրությունն իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում.</p> <ol style="list-style-type: none"> 1. Հաճախորդի կողմից՝ առնվազն վարկի մնացորդի չափով 2. Բանկի կողմից՝ վարկի մնացորդի չափով:
<p>Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրվող միասնական տեղեկանքի համար սահմանված վճար, Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի/տրանսպորտային միջոցի նոտարական վավերացման և Գրավի պայմանագրից ծագող Բանկի իրավունքի պետական իրավասու մարմնում գրանցման վճար Ոստիկանությունից տրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ Տեղեկանքի վճար</p>
<p>Վարկի վաղաժամկետ մարում</p>	<p>Վարկի ժամկետի առաջին 3 տարվա ընթացքում Վարկի լրիվ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում վճարվում է ժամկետից շուտ վճարած գումարի 5%-ը, որը կիրառելի է 15 մլն ՀՀ դրամը գերազանցող վարկերի սահմանաչափի ժամկետից շուտ ամբողջական փակման դեպքում (կիրառելի չէ դրամական միջոցի/պարտատոմսերի գրավով ապահովված վարկերի դեպքում):</p>
<p>Պարտադիր վճարման ենթակա գումար</p>	<p>Քաղվածքում արտացոլված օգտագործված գումարի 3%, ոչ պակաս 5,000 ՀՀ դրամ, 10 ԱՄՆ դոլար, 10 եվրո և կուտակված տոկոսագումար*</p> <p>*կիրառելի չէ դրամական միջոցի գրավով կամ պարտատոմսերով ապահովված կամ Premium և Partner հաճախորդներին տրամադրված վարկային քարտերի դեպքում</p>

Ապահովություն	Որպես ապահովություն Բանկը կարող է պահանջել ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն
Երաշխավորություն	Երաշխավոր(ներ)ի փաստաթղթավորված եկամուտը պետք է կազմի վարկառուի եկամտի առնվազն 50%-ը, ինչպես նաև վարկային պատմությունը պետք է բավարարի Բանկի կողմից սահմանված պահանջներին
Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	Տույժ՝ ժամկետանց Վարկի և տոկոսագումարի 0.13 %-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար: Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:
Վարկի ձևակերպման վայր	Բանկ

Տոկոսադրույքի հետ կապված այլ պայմաններ

- Հաճախորդի ցանկությամբ գույքի Ապահովագրությունը Բանկի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը ավելացվում է Բանկի կողմից սահմանված հետևյալ վերադիրների չափով՝
 - Ավտոտրասպորտային միջոց 2.5%
 - Հիմնական միջոց 0.5%
- Անշարժ գույքի ապահովագրությունը հաճախորդի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը նվազեցվում է 0.05%՝ հաշվի առնելով ընդհանուր գրավային ապահովման մեջ յուրաքանչյուր գույքի տեսակի տեսակարար կշիռը:
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ապահովվածության (վարկ/գրավ) ցուցանիշի շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%:
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված վճարունակության չափանիշներից շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%:
- Այլ շեղումների դեպքում կարող է կիրառվել ավելի բարձր տոկոսադրույք +0.5%:
- Վարկի գումարը 15մլն ՀՀ դրամը գերազանցելու դեպքում Հաճախորդի կողմից առանց վարկի վաղաժամկետ մարման տուգանքի տարբերակ նախընտրելիս վարկի տոկոսադրույքը սահմանվում է +2% (կիրառելի չէ դրամական միջոցի/պատրաստման գրավով ապահովված վարկերի դեպքում):
- Փաստացի տոկոսադրույքի մեծությունը/արժեքը կարող է վերը նշվածից տարբերվել, եթե առկա են հետևյալ գործոնները կամ դրանցից որևէ մեկը.
 - Հաճախորդի ցանկությամբ գույքի ապահովագրությունն Բանկի կողմից իրականացվելու դեպքում
 - Վարկի մարումների դիֆերենցված կամ խառը եղանակն ընտրելու դեպքում
 - Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված վճարունակության չափանիշներից շեղման դեպքում
 - Լրացուցիչ գույք գրավադրելու դեպքում
 - Այլ շեղումների դեպքում

Գրավադրվող անշարժ գույքի գտնվելու վայրը՝ ՀՀ և ԼՂՀ մայրաքաղաքներ և մարզկենտրոններ, ինչպես նաև Աբովյան, Էջմիածին, Ջրվեժ, Առինջ, Ձորաղբյուր, Ծաղկաձոր, Դիլիջան, Քաջարան և Ջերմուկ քաղաքներ:

Արտասահմանյան արտադրության տրանսպորտային միջոցի արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 12 տարի՝ բացառությամբ ռուսական, չինական և պարսկական արտադրության տրանսպորտային միջոցների, որոնց դեպքում արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 8 տարի:

Գույքի գնահատում

Գրավադրվող անշարժ կամ շարժական գույքը պարտադիր գնահատվում է Բանկի հետ համագործակցող ընկերություններից որևէ մեկի կողմից՝ հաճախորդի ընտրությամբ: Գույքի գնահատման արժեքը կազմում է 13.000 -30.000 ՀՀ դրամ՝ կախված գույքի տեսակից: Առանձին դեպքերում խոշոր գույքի գնահատման վճարը սահմանվում է պայմանագրային հիմունքներով:

Բացի այդ հաճախորդը վճարում է նաև այլ ծառայությունների համար՝

- նոտարական վճար – միանվագ 14.000-16.000 ՀՀ դրամ՝ տրանսպորտային միջոցի դեպքում,
- նոտարական վճար – միանվագ 13.000-18.000 ՀՀ դրամ՝ անշարժ գույքի դեպքում,
- միասնական տեղեկանք (անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ)՝ 10.000 ՀՀ դրամ,
- անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական՝ 26.000 ՀՀ դրամ
- ՀՀ Ոստիկանության վճար (արգելանքի և շարժական գույքի գրավադրման համար) – միանվագ 5.000 ՀՀ դրամ:

Համագործակցող ապահովագրական ընկերությունների ցանկ

Ապահովագրական ընկերություն	Հասցե	Հեռ.
«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	ք. Երևան, Վ. Սարգսյան 10, տարածք 110 («Պիացցա Գոանդե» Բիզնես	(+37460) 500060
«ՌՈՍԳՈՍՏՏԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ	ք. Երևան, Հյուսիսային պող. 1	(+37410) 591010
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության 51, 53, տառածո	(+37410) 592121
«ՌԵՍՈ» ԱՓԲԸ	ք. Երևան, Կոմիտաս 62, տարածք 93-93/1	(+37460) 275757

- Անշարժ գույքի համար ապահովագրավճարը կազմում է վարկի գումարի 0,15-0.2 տոկոսը,

- Սարքավորումների համար ապահովագրավճարը կազմում է վարկի գումարի 0.2-0.35 տոկոսը,
- Շրջանառու միջոցների համար ապահովագրավճարը կազմում է վարկի գումարի 0.3-0.5 տոկոսը,
- Ավտոմեքենաների համար ապահովագրավճարը սկսվում է վարկի գումարի 2,5 տոկոսից:

Վերոնշյալ սակագները կարող են փոփոխվել կախված շուկայի իրավիճակից:

Համագործակցող գնահատող ընկերությունների ցանկ

Գնահատող ընկերություն	Հասցե	Հ Է
«Վի Էմ-Ար Փի» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց փակ. 8, թիվ 3	010 588 797 043 58 87 97
«Կոստ Կոնսալտ» ՍՊԸ	ք. Երևան, Խանջյան 13/2	010 544 882, 010 544 883
«Բիլիվ» ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի պող., 9-14 շենք	+37494221111 (բջջ.)
«Ֆինլոու» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 50, 3 բնակարան	+374 10506000 +374 60747400 +37491911155 (բջջ.) +37477780510 (բջջ.)
«Ֆոր Սմարթ Կոնսուլտ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Գյուլբեկյան փ. 30/3/128 տ.	+374 11277667 +374 91177667 (բջջ.) +374 98177667 (բջջ.) +374 41177667 (բջջ.)
«Ինէքս» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Նար-Դոսի 28	+374 77518116 (բջջ.) +374 41042287 (բջջ.)

Պահանջվող փաստաթղթեր

<p>Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր</p>	<ul style="list-style-type: none"> • Վարկի հայտ-դիմում • Անձը հաստատող փաստաթղթեր (բնօրինակը) • Ձեռքբերվող/գրավադրվող գույքի սեփականության վկայականի պատճեն
<p>Նախնական հաստատումից հետո պահանջվող փաստաթղթեր.</p>	<ul style="list-style-type: none"> • Տեղեկանք աշխատավարձի վերաբերյալ և/կամ եկամուտը հավաստող այլ փաստաթղթեր • Ամուսնության (ամուսնալուծության, (կնոջ/ամուսնու) մահվան), ծննդյան վկայական (բնօրինակները) • Գրավադրվող տրանսպորտային միջոցի հաշվառման/գրանցման վկայագիր և սեփականության վկայական (բնօրինակները) • Գրավադրվող անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի բնօրինակը • Գրավադրվող հողատարածքի գեոդեզիական չափագրումը** • Նախնական Հաշվետվություն` անշարժ գույքի/ տրանսպորտային միջոցի գնահատման վերաբերյալ • Այլ փաստաթղթեր` Բանկի մասնագետի պահանջով
<p>Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր</p>	<ul style="list-style-type: none"> • Անշարժ գույքի սեփականության իրավունքի հիմքերի պատճենները, ներկայացվում են ըստ պահանջի • Ձեռքբերվող/գրավադրվող գույքի սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթերը (բնօրինակները) • Գրավադրվող գույքի սեփականատերերի Ամուսնության (ամուսնալուծության, (կնոջ/ամուսնու) մահվան) վկայականի պատճենը • Տեղեկանք Անշարժ գույքի Կադաստրի պետական կոմիտեից` գույքի պարտավորություններով ծանրաբեռնվածության վերաբերյալ (Միասնական տեղեկանք) • Տեղեկանք Ոստիկանությունից տրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ • Հիմնական Հաշվետվություն` անշարժ գույքի գնահատման վերաբերյալ • Անշարժ գույքի/Տրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանագիր • Այլ փաստաթղթեր` Բանկի մասնագետի պահանջով

Վարկի սպասարկման սակագին

Նպատակ	ՀՀ դրամ
Վարկի պայմանների փոփոխություն	15,000
Վարկի մարման օրվա փոփոխություն	5,000
Անշարժ գույք գրավի առարկայի փոփոխություն (այդ թվում, գրավի սեփականատիրոջ փոփոխություն)	10,000
Տրանսպորտային միջոցի գրավի փոփոխություն (այդ թվում, գրավի սեփականատիրոջ փոփոխության համար)	5,000
Գրավի առարկայի հետ կապված համաձայնությունների, թույլտվությունների/տեղեկանքների տրամադրում	5,000 (ներառյալ ԱԱՀ)

Սակագինը կիրառվում է հաճախորդի նախաձեռնությամբ փոփոխությունների իրականացման դեպքում: Եթե 1 փոփոխության արդյունքում գանձման ենթակա է մի քանի սակագին, ապա գանձվում է ամենաբարձր սակագինը՝ 1 անգամ: Սակագները կիրառելի չեն դրամական միջոցների, պարտատոմսերի, առարկայագուրկ մետաղական հաշիների գրավով վարկերի համար: Եթե փոփոխությունների շրջանակներում իրականացվում է նոր գրավի ավելացում կամ երաշխավորի ավելացում, ապա սակագինը չի գանձվում:

Տեղեկատվություն երաշխավորի համար

Երաշխավորն ինքն է կրում վարկի մարման պատասխանատվությունը, երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Երաշխավորի վրա:

Երաշխավորն իրավունք ունի ստանալ հատուցում վարկառուից վարկի վճարման համար, այսինքն՝ կարող է վարկառուից պահանջել հատուցում վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

Վարկատուն պարտավոր է Երաշխավորին նախազգուշացնել վարկի մարման վերաբերյալ այսինքն, երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Երաշխավորը պարտավոր է վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

Երաշխավորը կարող է հայտնվել «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՅՈՒՑԱԿՈՒՄ» այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Երաշխավորը կարող է գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Երաշխավորին՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

Քաղվածքներ

Վարկային հաշիվների քաղվածքը Բանկը տրամադրում է հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով: Քաղվածքները տրամադրվում են փոստային հասցեով, էլեկտրոնային փոստով «Ինտերնետ-Բանկ» համակարգի միջոցով, կամ առձեռն՝ բանկի ցանկացած մասնաճյուղից:

Քաղվածքների, տեղեկատվական նյութերի և կրկնօրինակների տրամադրման միջնորդավճար	Սակագին
Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	անվճար
1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի տրամադրում կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ, յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի համար
Ցանկացած վաղեմության քաղվածքի ուղարկում հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեին առանց դրոշմակնիքի	անվճար
Տեղեկանքների տրամադրում	
3 ամիս և ավել հաշվետեր հաճախորդներին	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
Մինչև 3 ամսվա հաճախորդներին	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ 6
Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով/ Բանկի կայքով պատվիրելու դեպքում	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

Ուշադրություն.

ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵՁ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷՍԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅՑՎԵՆ ՁԵՁ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

Ուշադրություն.

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՆՍԻՍՏՐԱԿԱՆ ՏՈԿՈՍԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԻ ԿՐԿՆԱՊԱՏԻԿԸ:

Ուշադրություն.

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ՝ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՓԱՍՏԱՅԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՍԲ՝ ՎԱՐԿԻ ԱՐԺՈՒՅԹՈՎ: ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ԸՆԴՈՒՆՎՈՒՄ 365 ՕՐ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՏԱՐԻՆ:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ և ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

Տոկոսագումարների հաշվարկման կարգ.

Վճարման դիֆերենցված եղանակի դեպքում վարկի ամսական վճարման գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$R = m / n + m * r \% / 365 * o,$$

որտեղ՝ R – վարկի ամսական վճարումն է, m – վարկի մայր գումարն է,

n – վարկի ժամկետն է՝ արտահայտված ամիսներով, r – վարկի տարեկան տոկոսադրույքն է,

o - ամսվա օրերի քանակն է:

Անուիտետային մարման եղանակի դեպքում ամսական վճարման գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով. $R = P \times r / (1 - 1/(1+r)^n)$, որտեղ՝

R - Վարկի ամսական վճարումն է: P - Վարկի գումարն է:

n - Վարկի ամբողջ ժամանակահատվածի համար վարկային վճարումների ընդհանուր թիվն է (ամիսների քանակը):

r – Վարկի ամսական տոկոսադրույքը, որը հավասար է Վարկի տրամադրման պահին Պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքի 1/12 մասին:

Ամսական վճարումների չափի հաշվարկը կատարվում է մեկ միավորային ճշգրտությամբ և կլորացվում է մաթեմատիկական կանոններով:

Ամսական վճարումների կազմում Վարկի պարտքի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի հաշվարկմամբ. $P_t = R \times ((1 - 1/(1+r)^n) / r)$ բանաձևով, որտեղ՝

P_t - Վարկի փաստացի մնացորդն է t ժամանակահատվածի վերջում:

R - Վարկի ամսական վճարումն է:

t - Վճարումների քանակն է, որոնք պետք է կատարվեն մինչև Վարկի օգտագործման ժամկետի ավարտը (ամիսների քանակը):

r – Վարկի ամսական տոկոսադրույքն է, որը հավասար է Վարկի տրամադրման պահին Պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքի 1/12 մասին:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A - կրեդիտի գումարը /կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի

սկզբնական գումարը/ n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը
N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին
վճարի թիվը Kn-կրեդիտի մարմանն
ուղղված n-րդ վճարի գումարը
Dn –կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի
կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով
i – տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման
մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ.

Վարկատեսակ՝ Գույքով ապահովված
սպառողական վարկ Վարկի գումար՝ 15.000.000
ՀՀ դրամ

Հաստատուն
տոկոսադրույք՝ 17%

Մարման ժամկետ՝ 60 ամիս

Մարման եղանակ՝ անուիտետային /վարկի գումարի և տոկոսագումարի
հանրագումարը վճարվում է հավասարաչափ /

Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 75.000 ՀՀ դրամ

Ապահովագրության վճար՝ վարկի մնացորդի 0.16% չափով
յուրաքանչյուր տարի Անշարժ գույքի գնահատման վճար՝ 15.000 ՀՀ
դրամ

Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի
վճար՝ 10.300 ՀՀ դրամ Գրավի պայմանագրի նոտարական վավերացման վճար՝
13.000 ՀՀ դրամ

Գրավի իրավունքի պետական գրանցման վճար՝
26.000 ՀՀ դրամ Վարկի տրամադրման օր՝ 16/09/14թ.

Առաջին մարման օր՝ 11/10/14թ

Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 19.14 %

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկված է այն որոշող պայմանների հիմքով,
կրում է կողմնորոշող բնույթ և կարող է Պայմանագրի գործողության ընթացքում
փոփոխվել՝ կապված Վարկատուի կողմից Վարկը Պայմանագրով սահմանված
ժամկետներից շուտ մարելու, ինչպես նաև դրանց հաշվարկում ներառված տարրերի
փոփոխություն

Տոկոսադրույքի հաշվարկման օրինակ.

Վարկի սկզբնական գումար – 1,000,000

ՀՀ դրամ Վարկի տարեկան

տոկոսադրույք – 20%

Վարկի ժամկետ – 36 ամիս

Օրական տոկոսագումարը կկազմի՝ $1000000 \cdot 20 / 100 / 365 = 548$ ՀՀ դրամ

Ամսական մարումների մեծությունը անուիտետային մարման եղանակով կկազմի - 37,163.6 ՀՀ
դրամ

Ուշադրություն.

ԳՐԱՎԱՂԴՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ԲՈՆՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ: ԳՐԱՎԻ ԱՐԺԵՔԻ ԱՆԲԱՎԱՐԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՄԱՐՎԵՆ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

Ուշադրություն.

ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԵԼՈՒ ԵՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ, ԵՎ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝

1. Տույժ/տուգանքներ
2. Տոկոսագումարներ
3. Մայր գումար

ՁԵՐ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՄ:

Ուշադրություն.

Արտարժույթով տրամադրվող վարկերի գծով արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա, տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսանում պայմանագրի կնքման օրվա կամ նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայք էջում հրապարակված փոխարժեքը:

Վարկի վաղաժամկետ մարում՝

Սպառողական վարկի, տրանսպորտային միջոցի ձեռքբերման վարկի, վարկային գծի և օվերդրաֆտի դեպքում հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

Տոկոսադրույքի փոփոխման կարգը.

Բանկը իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել տոկոսի չափը՝ կախված

Ֆինանսական շուկայից, Բանկի ներգրաված և/կամ շուկայում տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների տատանումներից, և/կամ եթե ֆինանսական շուկայում իրատեսական են դարձել վարկի տարեկան տոկոսադրույքի փոփոխման նախադրյալները: Ընդ որում՝ Բանկը պարտավոր է անվանական տոկոսադրույքի միակողմանի փոփոխման դեպքում այդ մասին նախօրոք՝ պայմանագրով սահմանված ժամկետում /առնվազն 7 օր առաջ/ և պայմանագրով սահմանված եղանակով ծանուցել վարկառուին, ինչը հիմք է հանդիսանում ծանուցման մեջ նշված ժամկետից փոփոխված տոկոսադրույքը կիրառելու համար: Եթե վարկառուն համաձայն չէ փոփոխված տոկոսի հետ, ապա նա իրավունք ունի վաղաժամկետ լուծել համապատասխան համաձայնագիրը՝ կատարելով բանկի հանդեպ տվյալ համաձայնագրով իր ունեցած պարտավորություններն ամբողջ ծավալով:

Սպառողն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում սպառողը պարտավոր է կրեդիտի գումարը օգտագործելու համար կրեդիտավորողին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են կրեդիտավորման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Կրեդիտավորման պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում սպառողից պահանջվել չի կարող: